ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱԿԴԻՐՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՆԱՐ-ԴՈՍԻ «ՄԵՐ ԹԱՂԸ» ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐՈՒՄ

ՔՐԻՍՏԻՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Շիրակի պետական համալսարան, ՀՀ, Գյումրի

Էլ. հասցե՝ *qristinenikoghosyan@mail.ru*

DOI: 10.24234/scientific.v3i53.396

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված են Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի համեմատությունների և մակդիրների կառուցվածքային, իմաստային և գործառութային առանձնահատկությունները, դրանց կիրառության հիմնական օրինաչափություններն ու արտահայտչական հնարավորությունները: Վերլուծությունը ցույց է տվել, որ համեմատություններն ու մակդիրները Նար-Դոսի պատկերավորման համակարգի կարևոր բաղադրիչներից են: Համեմատություններն առավելապես կառուցվում են ժողովրդական պատկերացումների, բնության, կենդանական աշխարհի և առօրյա կյանքի երևույթների հիման վրա, իսկ թեական համեմատությունները նպաստում են կերպարների անհատական ընկալումների և հուզական ապրումների արտահայտմանը: Տարբեր իմաստային ոլորտների պատկերների համադրումը ուժեղացնում է համեմատությունների գեղարվեստական ազդեցությունը և արտահայտչականությունը: Մակդիրները ներկայացված են կառուցվածքային և իմաստային բազմազան ձևերով՝ ներառելով պարզ և բաղադրյալ, գունային և անձնանուն-մակդիրները, կայուն մակդրային արտահայտությունները: Հատկանշական է «աչքեր» և «հայացք» բաղադրիչներով մակդիրների հաճախականությունը, որոնք կարևոր դեր են կատարում կերպարների հոգեբանական վիճակի բացահայտման գործում: Անձնանուն-մակդիրները հանդես

են գալիս որպես կերպարների անհատականացման և ժողովրդական լեզվամտածողության արտահայտման յուրահատուկ միջոցներ: Հետազոտության արդյունքները վկայում են, որ համեմատությունների և մակդիրների նպատակային ու բազմաբնույթ կիրառությունը պայմանավորում է Նար-Դոսի գեղարվեստական խոսքի արտահայտչականությունը, նպաստում ստեղծագործության լեզվաոճական ինքնատիպության ձևավորմանը և բացահայտում գրողի պատկերավոր մտածողության առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ *Նար-Դոս, «Մեր թաղը», համեմատություն, մակդիր, պատկերավորման համակարգ, լեզվաոճ, արտահայտչականություն, պատկերավորություն, ժողովրդական լեզվամտածողություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստական խոսքի կարևորագույն առանձնահատկություններից են պատկերավորությունը և արտահայտչականությունը, որոնք ապահովվում են լեզվական բազմազան միջոցների կիրառմամբ: Պատկերավորման միջոցները ոչ միայն գեղագիտական արժեք են հաղորդում ստեղծագործությանը, այլև նպաստում հեղինակի մտքերի, զգացմունքների և գնահատողական վերաբերմունքի առավել ազդեցիկ արտահայտմանը: Դրանց միջոցով բացահայտվում են գեղարվեստական աշխարհի գաղափարական, հուզական և կերպարային շերտերը՝ ձևավորելով ստեղծագործության լեզվաոճական ինքնատիպությունը:

Հայ դասական արձակում պատկերավորման միջոցների կիրառման ինքնատիպ համակարգ է ձևավորել Նար-Դոսը: Նրա «Մեր թաղը» պատմվածաշարը առանձնանում է ժողովրդական լեզվամտածողության, կենդանի խոսքի տարրերի և արտահայտչական հարուստ միջոցների ներդաշնակ համադրությամբ (Նար-Դոս, 1982): Ստեղծագործության լեզվաոճական համակարգում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում համեմատություններն ու մակդիրները, որոնք Նար-Դոսի գեղարվեստական մտածողության և պատկերավորման առանձնահատկությունների կարևոր դրսևորումներից են:

Համեմատություններն ու մակդիրները Նար-Դոսի գեղարվեստական լեզվի բնորոշ արտահայտչամիջոցներից են: Դրանց հիմքում հաճախ ընկած են ժողովրդական պատկերացումները, կենցաղային իրողությունները, կենդանական և բուսական աշխարհի երևույթները: Այս միջոցների կիրառությունը նպաստում է կերպարների հոգեբանական առանձնահատկությունների, միջավայրի և հասարակական հարաբերությունների առավել տպավորիչ ներկայացմանը:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում գործածված համեմատություններն ու մակդիրները, բացահայտել դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, ոճական գործառույթներն ու արտահայտչական արժեքը ստեղծագործության պատկերավորման համակարգում**:**

Հետազոտության նպատակին հասնելու համար քննության են ենթարկվել պատմվածաշարում գործածված համեմատություններն ու մակդիրները՝ դրանց կառուցվածքային, իմաստային և գործառութային առանձնահատկությունների տեսանկյունից:

Հետազոտության ընթացքում կիրառվել են նկարագրական, լեզվաոճական, համատեքստային վերլուծության և համեմատական քննության մեթոդները, որոնք հնարավորություն են տվել բազմակողմանիորեն ուսումնասիրելու Նար-Դոսի գեղարվեստական լեզվի պատկերավորման առանձնահատկությունները:

Հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի համեմատություններն ու մակդիրները քննվում են որպես միասնական պատկերավորման համակարգի փոխկապակցված բաղադրիչներ՝ բացահայտելով դրանց դերը ստեղծագործության լեզվաոճական ինքնատիպության ձևավորման գործընթացում:

Համեմատությունը լեզվի պատկերավորության միջոց է, որի դեպքում, Լ. Եզեկյանի բնորոշմամբ, «որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի պարզ ու տպավորիչ, պատկերավոր դարձնելու նպատակով համադրվում է այդ առարկայի որևէ կողմն արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային

յուրահատկություններով նման առարկայի կամ երևույթի հետ, որն ավելի ծանոթ է և բացահայտում է նկարագրվող իրողության էությունը» (Լ. Եզեկյան, 2003):

Լ. Եզեկյանի նշած հատկանիշները հստակորեն դրսևորվում են նաև Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի համեմատություններում: Վերջիններս աչքի են ընկնում պատկերայնությամբ, դիպուկությամբ և արտահայտչականությամբ՝ նպաստելով կերպարների, երևույթների և հոգեբանական վիճակների առավել տպավորիչ ներկայացմանը: Ընթերցողին ծանոթ կենցաղային, բնական և ժողովրդական պատկերների ներգրավումը հնարավորություն է տալիս առավել ամբողջական բացահայտելու նկարագրվող իրողությունների էությունն ու դրանց նկատմամբ հեղինակային վերաբերմունքը:

Պատմվածաշարում համեմատությունները կառուցվում են ինչպես համեմատական կապակցությունների *(պես, չափ, նման, ինչպես, կարծես և այլն)*, այնպես էլ առանց հատուկ ձևական ցուցիչների: Հեղինակը հաճախ դիմում է բնության և կենդանական աշխարհի պատկերներին, որոնց միջոցով ստեղծում է արտահայտիչ բնութագրումներ: Այսպես՝ *«Անանը մինչև անգամ չճչաց, այլ միայն հանկարծ բերանը բաց արեց, ներս ծծեց օդը մի տարօրինակ հևքով, **այնպես, ինչպես** ջրից հանած ձուկը, հետո օրորվեց և կամաց, **փալասի պես**, վար ընկավ գետին» (էջ 47), «Անանի մարդն էր, դրոգապան Յագորը, իր **դրոգի պես** կոպիտ ու անտաշ, իր հսկա **ձիու պես** խոշոր ու ջլապինդ» (էջ 45), «Ու ծտի **նման** ցած թռավ թախտից» (էջ 41), «Հողե հատակն անդադար ջրվելուց խոնավացել, պնդացել, գորշ գույն էր սպացել և այնքան մաքուր էր, որ, ինչպես ասում են, **յուղ թափեիր՝ կհավաքվեր**» (էջ 39), «Բայց նա ոչինչ չէր զգում, զգում էր միայն մի բան — **սիրուհու չափ տենչալի և մահվան չափ անդիմադրելի,** զգում էր ծարավ, ոգելից խմիչքի անհուն ծարավ» (էջ 32), «Այդ միջոցին նրա դեմքը գարշանքի այնպիսի արտահայտություն էր սպացել, որ **կարծես** լուծողական էր ընդունում» (էջ 37):*

Ներկայացված նյութի քննությունը վկայում է, որ համեմատությունների հիմքում հաճախ ընկած են կենդանական աշխարհի, բնության երևույթների և առօրյա կյանքի իրողությունները: Նման համեմատություններում համադրման հիմք են ծառայում ընթերցողին ծանոթ և ընկալելի երևույթները, որոնց միջոցով առավել ընդգծված են

ներկայացվում կերպարների արտաքին ու ներքին հատկանիշները, ինչպես նաև նկարագրվող իրադարձությունների հուզական երանգները: Դրանց կիրառությունը ստեղծագործության լեզվին հաղորդում է պատկերավորություն, բնականություն և ազգային ինքնատիպություն: Բնության, կենդանական աշխարհի և կենցաղային միջավայրի տարրերի ակտիվ ներգրավումը Նար-Դոսի համեմատությունների բնորոշ առանձնահատկություններից է:

Համեմատություններում Նար-Դոսը հաճախ գործածում է նաև *«կարծես», «ասես», «կասես»* եղանակավորող բառերը, որոնք համեմատությանը հաղորդում են ենթադրական կամ թեական երանգ: Ինչպես նշում է Հ. Հարությունյանը, «***կարծես, ասես*** եղանակավորող բառերն ունեն իմաստային այն յուրահատկությունը, որ համեմատության մեջ մտցնում են կասկածանքի, երկմտանքի երանգ» (Հ. Հարությունյան, 1986): Այդպիսի կառույցներում հեղինակը ոչ թե հաստատում է երևույթի իրական լինելը, այլ ներկայացնում է այն կերպարների կամ պատմողի սուբյեկտիվ ընկալման միջոցով: Օրինակ՝ *«...նայում էին դռանն այնպիսի հայացքով, որ **կարծես** մարդու էին սպասում» (էջ 56), «Խոսքը չվերջացավ պառավի բերանում, գժված գոմշի պես ներս ընկավ մի ահագին մարդ, այնքան ահագին, որ ներս ընկնելուն պես **կասես** լցրեց իրենով այդ փոքրիկ խրճիթը» (էջ 45):*

Հատկանշական է, որ *«կասես»* ձևը, որը ծագումով պայմանական եղանակի բայաձև է, տվյալ կիրառության մեջ հանդես է գալիս վերաբերականի արժեքով՝ արտահայտելով ենթադրականություն և թեական վերաբերմունք: Լ. Եզեկյանը նման կիրառություններն անվանում է «թեական համեմատություններ», որոնցում գերակշռում է անհատական տպավորությունն ու գնահատականը (Լ. Եզեկյան, 2003): Նար-Դոսի ստեղծագործության մեջ թեական համեմատությունների կիրառությունը պայմանավորված է կերպարների ներաշխարհի և նրանց ընկալումների փոխանցման ձգտմամբ: Այդպիսի կառույցները ոչ միայն պատկերավոր են ներկայացնում նկարագրվող երևույթները, այլև ընդգծում են պատմողի կամ կերպարի անհատական վերաբերմունքը՝ հաղորդելով խոսքին հոգեբանական խորություն և արտահայտչականություն:

Որոշ դեպքերում համեմատությունները ծառայում են նաև նկարագրվող երևույթի հուզական ազդեցության ուժեղացմանը և դրա առավել տպավորիչ ներկայացմանը: Այսպես՝ *«Մարթան մտավ, որ ճրագ վառի և մտնելուն պես այնպիսի մի ճիչ արձակեց, որ **կարծես** օձ խայթեց» (էջ 18)* օրինակում համեմատությունը ոչ միայն պատկերավոր ներկայացնում է իրավիճակը, այլև ընդգծում է կերպարի ապրումների ուժգնությունն ու հուզական լարվածությունը: Նույն գործառույթն ունի նաև *«Հավիտենական աղբով ծածկված ծուռտիկ-մուռտիկ փողոցներ, որոնք նեղլիկ անցքերով գնում խաչաձևում են իրար կամ դեմ առնում մի պատի՝ կույր մուրացկանի **պես**» (էջ 16)* համեմատությունը, որի միջոցով առավել տեսանելի և տպավորիչ է դառնում նկարագրվող միջավայրի անմխիթար և ճնշող բնույթը: Նման կիրառություններում համեմատությունները ոչ միայն շեշտում և սաստկացնում են տվյալ հատկանիշի ընկալումը, այլև պարունակում են մեկնողական բաղադրիչ՝ նպաստելով հեղինակի մտահղացման առավել ամբողջական արտահայտմանը:

«Մեր թաղը» պատմվածաշարի համեմատություններում նկատելի է նաև ժողովրդական խոսքին բնորոշ չափազանցության տարրը: «Խո չե՞ս ուզում էս սհաթին ճիվը ճվիցդ հանեմ, ճիճվի **պես** ճխլեմ ոտիս տակը» (էջ 46), «… ճանճերի **պես** իրար խառնված վազվզում էին փողոցներում ականջ խլացնելու չափ ճիչ ու ծղրտոցով» (էջ 62) և նման օրինակներում համեմատությունը զուգակցվում է չափազանցության հետ՝ նպաստելով կերպարային խոսքի արտահայտչականության և հուզական լարվածության ուժեղացմանը: Նման կիրառություններում չափազանցությունը ոչ միայն սաստկացնում է նկարագրվող գործողության կամ երևույթի ազդեցությունը, այլև արտացոլում է ժողովրդախոսակցական խոսքին բնորոշ հուզականությունը, գնահատողական վերաբերմունքն ու պատկերավոր մտածողությունը:

Նար-Դոսի կիրառած համեմատությունների արժեքը պայմանավորված է նաև նրանով, որ հեղինակը հաճախ անսպասելի ընդհանրություններ է բացահայտում տարբեր երևույթների միջև: Ինչպես նկատում է Պ. Պողոսյանը, համեմատության արտահայտչական ուժը հաճախ պայմանավորված է միմյանցից հեռու երևույթների միջև ընդհանրությունների բացահայտմամբ (Պ. Պողոսյան, 1991): Այս սկզբունքը

բնորոշ է նաև քննվող համեմատություններին, որոնցում տարբեր իմաստային ոլորտների պատկերների համադրումը նպաստում է գեղարվեստական տպավորության խորացմանը: Դրա վառ օրինակն է հետևյալը *«սիրուհու չափ փենչալի և մահվան չափ անդիմադրելի» (էջ 32)*, որտեղ ծարավի զգացողությունը բնութագրվում է սիրո և մահվան հետ առնչվող պատկերացումների միջոցով ծարավը ներկայացվում է ոչ միայն որպես ֆիզիկական պահանջ, այլև որպես ներքին մղում, որը կերպարի գիտակցության մեջ ձեռք է բերում բացառիկ արժեք և ուժգնություն: Այսպիսով, Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի համեմատությունները հանդես են գալիս ոչ միայն որպես գեղարվեստական պատկերավորման միջոցներ, այլև որպես ստեղծագործության գաղափարական և լեզվաոճական կառուցվածքի ձևավորման գործուն բաղադրիչներ: Դրանց կիրառությունը վկայում է գրողի պատկերավոր մտածողության ինքնատիպության, ժողովրդական լեզվամտածողության ստեղծագործական յուրացման և արտահայտչական միջոցների նպատակային գործածության մասին:

Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի լեզվաոճական համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում մակդիրները, որոնք պատկերավորման համակարգի նշանակալի բաղադրիչներից են: Որպես գեղարվեստական որոշիչներ՝ դրանք տարբերվում են սովորական որոշիչներից նրանով, որ փոխաբերական իմաստավորման շնորհիվ ոչ միայն բնութագրում են առարկաներն ու երևույթները, այլև արտահայտում են հեղինակային գնահատականը, գեղագիտական վերաբերմունքը և աշխարհընկալման առանձնահատկությունները: Մակդիրների միջոցով գեղարվեստական խոսքը ձեռք է բերում լրացուցիչ արտահայտչականություն և պատկերայնություն, իսկ նկարագրվող իրողությունները ներկայացվում են առավել տպավորիչ և գնահատողական երանգավորմամբ:

Պատմվածաշարում մակդիրները նպաստում են կերպարների արտաքին և ներքին հատկանիշների, հոգեբանական վիճակների և միջավայրի առավել արտահայտիչ ներկայացմանը՝ հարստացնելով ստեղծագործության լեզվաոճական համակարգը:

Նար-Դոսի գործածած մակդիրները բազմազան են կառուցվածքային և իմաստային առումներով: Դրանց կիրառությունը պայմանավորված է գեղարվեստական պատկերման և գնահատողական վերաբերմունքի արտահայտման անհրաժեշտությամբ: Միաժամանակ մակդիրները կարևոր դեր են կատարում ժողովրդական լեզվամտածողության դրսևորման և ստեղծագործության լեզվաոճական ինքնատիպության ձևավորման գործընթացում:

Լեզվաբանական գրականության մեջ մակդիրների դասակարգման տարբեր մոտեցումներ են առաջարկվել: Մի դեպքում, հաշվի առնելով բառի ուղղակի կամ փոխաբերական իմաստի վրա խարսխված լինելը, տարբերակվում են ուղղակի կամ փոխաբերական մակդիրներ (Է. Ջրբաշյան, 1980), մեկ այլ պարագայում, ուշադրության կենտրոնում պահելով մակադրյալ բառը, տարբերակում են առարկայական մակդիրներ *(գոյականով մակադրյալ)* և գեղարվեստական մակադրություններ *(բայով մակադրյալ)* (Ա. Մարության, 1984): Սույն հետազոտության շրջանակներում, չսահմանափակվելով մակդիրների դասակարգման առանձին մոտեցումներով, հիմք է ընդունվել դրանց կառուցվածքային և իմաստային քննությունը, ինչը հնարավորություն է տվել բազմակողմանիորեն ներկայացնելու մակդիրների դրսևորումները Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում:

Մակդիրները կարող են տարբերակվել նաև ըստ կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունների: Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում հանդիպում են պարզ և բաղադրյալ մակդիրներ, կայուն մակդրային արտահայտություններ, գունային մակդիրներ և անձնանուն-մակդիրներ, որոնք տարբեր դեր են կատարում ստեղծագործության պատկերավորման համակարգում: Դրանց կիրառությունը նպաստում է կերպարների արտաքին և ներքին հատկանիշների բնութագրմանը, հոգեբանական վիճակների բացահայտմանը, ինչպես նաև միջավայրի ու կենցաղային իրողությունների գեղարվեստական պատկերմանը՝ մասնակցելով ստեղծագործության լեզվաոճական ինքնատիպության ձևավորմանը:

Հեղինակը գործածում է թե՛ պարզ (մեկ բառով արտահայտված), թե՛ բաղադրյալ (բառակապակցությամբ արտահայտված) մակդիրներ: Պարզ մակդիրների օրինակներ՝ *«թախծալից լռություն» (էջ 4), «սրբազան երկյուղածություն» (էջ 25), «մութ կասկած» (էջ 27), «խավար միտք» (էջ 26), «քացախած օդ» (էջ 36), «քարացած աչքեր» (էջ 40)*: Բաղադրյալ մակդիրներ են՝ *«հավիտենական աղբով ծածկված ծուռտիկ-մուռտիկ փողոցներ» (էջ 16), «հոգնատանջ, քրտնած երես» (էջ 42), «ծանր ու չարագուշակ լռություն» (էջ 15), «բարի վշտահար աչքեր» (էջ 10)* և այլն:

Պարզ և բաղադրյալ մակդիրների զուգահեռ կիրառությունը հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն ներկայացնելու կերպարների, առարկաների և երևույթների հատկանիշները՝ նպաստելով ստեղծագործության պատկերավորման համակարգի հարստացմանը և լեզվաոճական ինքնատիպության ձևավորմանը:

Պատմվածաշարում հանդիպում են նաև կայուն մակդրային արտահայտություններ, որոնք ձևավորվել են ժողովրդախոսակցական լեզվի և ժողովրդական մտածողության ազդեցությամբ: Դրանց մի մասը լայն գործածության շնորհիվ ձեռք է բերել կայուն բնույթ և կիրառվում է որպես կերպարների, երևույթների ու հոգեվիճակների բնութագրման միջոց: Այդպիսի արտահայտություններից են «խորին անտարբերություն» (էջ 5), «բթացած հայացք» (էջ 15), «խավար միտք» (էջ 26), «մութ կասկած» (էջ 27), «ծանր հոտ» (էջ 62), «ծանր հարված» (էջ 68) և այլն:

Նման մակդրային արտահայտությունները ոչ միայն բնութագրում են նկարագրվող անձանց և երևույթները, այլև արտացոլում են ժողովրդական լեզվամտածողության առանձնահատկությունները՝ ստեղծագործության լեզվին հաղորդելով ազգային ինքնատիպություն և արտահայտչականություն:

Հաճախակի են «հայացք» և «աչքեր» բաղադրիչներով կազմված մակդիրները, որոնք կարևոր դեր են կատարում կերպարների հոգեբանական վիճակի և ներաշխարհի բացահայտման գործում:Օրինակներ՝ *«ոչխարամիտ հայացք» (էջ 12), «բթացած հայացք» (էջ 15), «մտառու հայացք» (էջ 16), «խելագարի անմիտ հայացք» (էջ 20), «սովալլուկ հայացք» (էջ 34), «ձանձրացած աչքեր» (էջ 5), «պլպլացող աչքեր» (էջ 9), «վշտահար աչքեր» (էջ 10), «հանգած աչքեր» (էջ 17), «հրացայտ աչքեր» (էջ 37), «քարացած աչքեր» (էջ 40), «կատաղի աչքեր» (էջ 46), «ահարկու աչքեր» (էջ 48)* և

այլն: Նման մակդիրների միջոցով հեղինակը աչքերն ու հայացքը վերածում է հոգեբանական բնութագրման կարևոր միջոցի, որի օգնությամբ բացահայտվում են կերպարների հուզական վիճակը, ներքին ապրումները և անհատական առանձնահատկությունները: Այս հանգամանքը վկայում է, որ Նար-Դոսի կերպարակերտման համակարգում արտաքին նկարագրության տարրերը հաճախ ծառայում են ներաշխարհի բացահայտմանը:

Նար-Դոսի մակդիրների համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում նաև ***գունային մակդիրները***, որոնք հաճախ հանդես են գալիս ոչ միայն նկարագրական, այլև խորհրդանշական նշանակությամբ: «Մեր թաղը» պատմվածաշարում դրանց զգալի մասը ձևավորվել է ժողովրդական լեզվամտածողության ազդեցությամբ և կապված է գույների՝ հատկապես սև և կարմիր գունանշումների վերաիմաստավորման հետ: Այսպես՝ «Ադամամութին» պատմվածքում նորածինը բնութագրվում է *«կարմիր մանուկ»* մակդրային բնորոշմամբ *(«Մոր ծնկների արանքին մի պստիկ, շատ պստիկ մանուկ տեսավ, մերկ, կարմիր» (էջ 62))*, որտեղ կարմիր գույնը պայմանավորված է բնական նկարագրությամբ: Մինչդեռ «Սև փողեր» վերնագրում գործածված *«սև»* մակդիրը ձեռք է բերում խորհրդանշական նշանակություն՝ արտահայտելով հերոսուհու ծանր ճակատագիրը, հուսահատությունը և կյանքի ողբերգական ընթացքը:

Գունային մակդիրները Նար-Դոսի ստեղծագործության մեջ հանդես են գալիս ոչ միայն որպես նկարագրական միջոցներ, այլև որպես լրացուցիչ իմաստային և հուզական շերտեր ձևավորող բաղադրիչներ:

Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում մակդիրներն արտահայտվում են տարբեր խոսքի մասերով: Առավել հաճախ դրանք ներկայացված են ածականներով, ինչպես՝ *անզուգական հայհոյանք (էջ 65), պղտոր լույս (էջ 42), ապուշ տարակուսանք (էջ 40), մութ կասկած (էջ 27), դառը հանդիմանություն (էջ 5)*: Հանդիպում են նաև դերբայներով արտահայտված մակդիրներ, օրինակ՝ *«ծանծրացած արև» (էջ 5), «պլպլացող աչքեր» (էջ 9), «բթացած հայացք» (էջ 19)*:

Մակդիրների արտահայտման միջոցների բազմազանությունը նպաստում է կերպարների, երևույթների և հոգեբանական վիճակների առավել բազմակողմանի լեզվաոճական բնութագրմանը:

Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում անձնանուն-մակդիրները, որոնք կերպարների անհատականացման կարևոր միջոցներից են: Դրանց միջոցով բնութագրվում են հերոսների բնավորությունը, զբաղմունքը, սոցիալական դիրքը և հանրային ընկալումը: Անձնանուններին վերագրվող մակդիրները հաճախ դառնում են կերպարի ամենաբնորոշ հատկանշի խտացված արտահայտությունը՝ որոշ դեպքերում ձեռք բերելով մականվան գործառույթ: Այդպիսի օրինակներից են՝ *«գրբաց Գրիգոր» (էջ 22), «թաբախ ման ածող Ցական» (էջ 28), «գիժ-Հոռոմսիմ» (էջ 40), «զինագործ Ասատուր» (էջ 62)*: Դրանք տարբերակում են կերպարներին, նպաստում նրանց սոցիալական և հոգեբանական բնութագրի ամբողջականացմանը:

Անձնանուն-մակդիրների մի մասը գործառութային առումով մոտենում է մականուններին: Թեև լեզվաբանության մեջ դրանց կարգավիճակի վերաբերյալ միասնական մոտեցում չի ձևավորվել, Նար-Դոսի ստեղծագործության մեջ դրանք հիմնականում հանդես են գալիս որպես կերպարների բնորոշ հատկանիշներն ընդհանրացնող և անհատականացնող գեղարվեստական միջոցներ: Այս առումով «գրբաց Գրիգոր», «թաբախ ման ածող Ցական» և «գիժ-Հոռոմսիմ» անվանումները ոչ միայն տարբերակում են կերպարներին, այլև խտացված ձևով ներկայացնում նրանց բնավորության, զբաղմունքի կամ վարքագծի առավել բնորոշ գծերը:

Հատկանշական է, որ որոշ դեպքերում հեղինակը ներկայացնում է նաև անձնանուն-մակդիրների ծագման բացատրությունը: Այսպես, «թաբախ ման ածող Ցական» անվանումը պայմանավորված է կերպարի զբաղմունքով, ինչի մասին վկայում է հետևյալ բնութագրումը. «Այդ միջոցին այրի Օսանի պսակած տղան, որին թաբախ ման ածող Ցական էին ասում (նա շրջիկ մրգավաճառ էր), տուն դարձավ դատարկ թաբախը գլխին, կշեռքն ուսին, չիբուխը բերնին» (էջ 28): Նույն կերպ «Հոպոպ Ասատուր» մականունը բացատրվում է ժողովրդական առածի հիմքով. «Ամբողջ թաղը Հոպոպ մականունով էր կնքել զինագործ Ասատուրին, ժողովրդական

այն առածի հիման վրա, որ ասում է, թե «Հոպոպը ինքը հոտած էր, կարծում էր, թե բույնն է հոտած»» (էջ 65): Նման կիրառությունները վկայում են, որ անձնանուն-մակդիրները Նար-Դոսի ստեղծագործության մեջ ոչ միայն բնութագրական, այլև ժողովրդախոսակցական լեզվի և հավաքական լեզվամտածողության արտահայտման միջոցներ են:

Այսպիսով՝ Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում մակդիրները կարևոր դեր ունեն ստեղծագործության լեզվաոճական համակարգում՝ հարստացնելով գեղարվեստական խոսքի արտահայտչականությունն ու պատկերավորությունը: Դրանց կառուցվածքային և իմաստային բազմազանությունը վկայում է հեղինակի լեզվական միջոցների ընտրության նպատակաուղղվածության և ոճական վարպետության մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում համեմատություններն ու մակդիրները նպաստում են ստեղծագործության լեզվաոճական ինքնատիպության ձևավորմանը և գեղարվեստական ազդեցության խորացմանը:

Համեմատությունների համակարգում գերակշռում են ժողովրդական պատկերացումների, բնության, կենդանական աշխարհի և առօրյա կյանքի երևույթների հիման վրա ձևավորված կառույցները, որոնք նպաստում են ստեղծագործության պատկերայնության և լեզվաոճական ինքնատիպության ձևավորմանը:

Թեական համեմատությունների գործածությունը պայմանավորված է կերպարների ներաշխարհի, անհատական ընկալումների և հուզական ապրումների արտահայտման անհրաժեշտությամբ, ինչի շնորհիվ խորանում է ստեղծագործության հոգեբանական շերտը:

Մակդիրների համակարգն առանձնանում է կառուցվածքային և իմաստային բազմազանությամբ՝ ներառելով պարզ և բաղադրյալ մակդիրներ, կայուն մակդրային արտահայտություններ, գունային և անձնանուն-մակդիրներ:

Անձնանուն-մակդիրները Նար-Դոսի ստեղծագործության մեջ հանդես են գալիս որպես կերպարների անհատականացման, սոցիալական բնութագրման և ժողովրդական լեզվամտածողության արտահայտման արդյունավետ միջոցներ:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք արձանագրել, որ համեմատությունների և մակդիրների նպատակային ու բազմաբնույթ կիրառությունը պայմանավորում է Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի լեզվաոճական ինքնատիպությունը և բացահայտում գրողի գեղարվեստական մտածողության բնորոշ առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հարությունյան Հ. (1986). *Գեղարվեստական խոսք*. Երևան:

Եզեկյան Լ. (2003). *Ոճագիտություն*. Երևան:

Ջրբաշյան Է. (1980). *Գրականության տեսություն*. Երևան:

Մարության Ա. (1984). Մակդիրը որպես գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոց. *Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում*, (4).

Նար-Դոս (1982). *Մեր թաղը*.

Պողոսյան Պ. (1991). *Խոսքի մշակույթի հիմունքներ*. Երևան:

REFERENCE LIST

Arutyunyan G. (1986). Hudozhestvennaya rech *(Literary language)*. Erevan.

Dzhrbashyan E. (1980). Teoriya literatury *(Literary Theory)*. Erevan.

Ezekyan L. (2003). Stilistika *(Stylistics)*. Erevan.

Marutyan A. (1984). Kontekst kak sredstvo vizualizacii hudozhestvennoj rechi *(Context as a Means of Visualizing Artistic Discourse)*. Armyanskij yazyk i literatura v shkole, (4).

Nar-Dos (1982). Nash rajon *(Our neighborhood)*.

Pogosyan P. (1991). Osnovy rechevoj kul'tury *(Fundamentals of Speech Culture)*. Erevan.

РЕЗЮМЕ

СТИЛИСТИЧЕСКАЯ ЦЕННОСТЬ СРАВНЕНИЙ И ЭПИТЕТОВ В ЦИКЛЕ РАССКАЗОВ НАР-ДОСА «НАШ КВАРТАЛ»

Кристине Никогосян

В статье рассматриваются структурные, семантические и функциональные особенности сравнений и эпитетов в цикле рассказов Нар-Доса «Наш квартал», а также основные закономерности их употребления и выразительные возможности.

Анализ показал, что сравнения и эпитеты являются важными компонентами образной системы Нар-Доса. Сравнения преимущественно строятся на основе народных представлений, явлений природы, образов животного мира и повседневной жизни, тогда как предположительные сравнения способствуют выражению индивидуального восприятия и эмоциональных переживаний персонажей. Сопоставление образов, относящихся к различным семантическим сферам, усиливает художественное воздействие и выразительность сравнений. Эпитеты представлены разнообразными структурными и семантическими типами, включая простые и составные, цветовые и антропонимические эпитеты, а также устойчивые эпитетные выражения. Характерной особенностью является высокая частотность эпитетов с компонентами «глаза» и «взгляд», которые играют важную роль в раскрытии психологического состояния персонажей. Антропонимические эпитеты выступают своеобразным средством индивидуализации персонажей и выражения народного языкового мышления. Результаты исследования свидетельствуют о том, что целенаправленное и многоаспектное использование сравнений и эпитетов обусловливает выразительность художественного языка Нар-Доса, способствует формированию языково-стилистической самобытности произведения и раскрывает особенности образного мышления писателя.

Ключевые слова: *Нар-Дос, «Наш квартал», сравнение, эпитет, система художественной образности, стилистика, выразительность, образность, народное языковое мышление.*

SUMMARY

THE STYLISTIC VALUE OF SIMILES AND EPITHETS IN NAR-DOS'S SHORT STORY CYCLE *"OUR NEIGHBORHOOD"*

Kristine Nikoghosyan

The article examines the structural, semantic, and functional characteristics of similes and epithets in Nar-Dos's short story cycle *Our Neighborhood*, as well as the main patterns of their use and their expressive potential. The analysis revealed that similes and epithets constitute important components of Nar-Dos's figurative system. Similes are primarily based on folk perceptions, natural phenomena, the animal world, and everyday life, whereas hypothetical similes contribute to the expression of the characters' individual perceptions and emotional experiences. The juxtaposition of images belonging to different semantic domains enhances the artistic impact and expressiveness of similes. Epithets occur in a wide variety of structural and semantic forms, including simple and compound, colour and anthroponymic epithets, as well as fixed epithetic constructions. Particularly noteworthy is the high frequency of epithets containing the lexical items *eyes* and *gaze*, which play an important role in revealing the psychological states of the characters. Anthroponymic epithets serve as distinctive means of character individualization and of expressing the folk linguistic worldview. The findings of the study indicate that the purposeful and multifaceted use of similes and epithets underlies the expressiveness of Nar-Dos's literary language, contributes to the formation of the work's stylistic originality, and reveals the distinctive features of the writer's figurative thinking.

Keywords: *Nar-Dos, Our Neighborhood, simile, epithet, figurative system, stylistics, expressiveness, imagery, folk linguistic worldview.*

Հոդվածը սպացվել է՝ 15.07.2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 16.07.2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 25.08.2026